ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 92-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԹԻՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝
Որոշում եմ.

1.Ձևավորել Թումանյանի համայնքային դիմակայունության թիմ, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքում աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման և համայնքի դիմակայունության հարցերով խորհրդատվական մարմին:
2.Հաստատել Թումանյան համայնքի դիմակայունության թիմի աշխատակարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
3.Հաստատել Թումանյան համայնքում աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման թիմի կազմը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 1
ք.Թումանյան

Հավելված N 1
Թումանյան համայնքի ղեկավարի
2021թ հոկտեմբերի 1-ի թիվ 92-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԹԻՄ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Համայնքային դիմակայունության թիմը (այսուհետ՝ թիմ) ստեղծվում է համայնքապետի որոշմամբ և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Թումանյան համայնքում Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) ազգային ռազմավարության իրականացման և համայնքի դիմակայության հարցերով խորհրդատվական մարմին:
2. Թիմն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:
3. Թիմը հաշվետու է համայնքապետին և ավագանուն:
4. Թիմին կից, ըստ անրաժեշտության, կարող են ստեղծել աշխատանքային թեմատիկ խորհրդատվական խմբեր:
5. Թիմի աշխատանքներում և թեմատիկ խմբերում կարող են ներգրավվել՝
   - ✓ համայնքապետարանի ներկայացուցիչներ (ի պաշտոնե),
   - ✓ համայնքի բնակավայրերի պատասխանատուներ (ի պաշտոնե),
   - ✓ համայնքի տարածքում գործունեություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ (իրենց համաձայնությամբ),
   - ✓ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (իրենց համաձայնությամբ),
   - ✓ մասնագիտացված կառույցների ներկայացուցիչներ (իրենց համաձայնությամբ),
   - ✓ խոցելի խմբերի ներկայացուցիչներ (իրենց համաձայնությամբ),
   - ✓ համայնքի և բնակավայրերի կամավորներ (իրենց համաձայնությամբ),
   - ✓ ինչպես նաև անկախ փորձագետներ (իրենց համաձայնությամբ):

II. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4.Թիմի խնդիրներն են՝

1) աջակցել դիմակայուն համայնքի ձևավորելու գործընթացին՝ նպաստելով համայնքի բնակչության մեջ անվտանգության և աղետների դիմակայուն մշակույթի ձևավորմանը,
2) ուղղորդել համայնքում դիմակայունության բարձրացման գործընթացները,

3) ներկայացներ առաջարկություններ դիմակայունության խնդիրների լուծման վերաբերյալ,
4) ներկայացնել առաջարկներ համայնքի զարգացման ծրագրերում դիմակայունության բարձրացման ուղղությամբ դրույթների ներառման և կիրառման վերաբերյալ,
5) նպաստել համայնքի կրթական, առողջապահական և այլ հատուկ նշանակության հաստատությունների կարողությունների զարգացմանը, անվտանգության մակարդակի բարձրացմանը,
6) նպաստել բնակչության առավելագույն ներգրավվածությանը համայնքի դիմակայունության բարձրացման գործընթացիներին,
7) նպաստել համայնքում աղետների ռիսկերի գնահատման, մշտադիտարկման, կանխատեսման մեխանիզմների և վաղ ազդարարման համակարգերի ներդրմանն ու զարգացմանը,
8) ապահովել համագործակցությունը ԱՌՆ ազգային պլատֆորմի, մարզային ԱՌՆ թիմի և համայնքում ԱՌՆ գործունեություն իրականացնող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ,
9) աջակցել ԱՌՆ ազգային պլատֆորմի շրջանակներում համայնքում իրականացվող ԱՌՆ և դիմակայունության բարձրացման գործընթացներին և ծրագրերին,
10) օժանդակել համապատասխան կառույցներին՝ապահովելու համար դիմակայունության և ԱՌՆ գործունեոըթյան վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը ազգային,մարզային և համայնքային մակարդակներում;

III. ԹԻՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

5. Թիմն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:
6. Թիմի նիստերը հրավիրվում և անց են կացվում թիմի ղեկավարի կողմից՝ըստ անհրաժեշտության:
7. Թիմի նիստերն իրավազոր են թիմի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում:
8. Թիմն իր նիստերի ընթացքում ներկայացված խնդրի վերաբերյալ իրականացնում և քննարկում,տալիս կարծիք և առաջարկություններ՝հնարավոր լուծումների վերաբերյալ:
9. Թիմի տրված առաջարկության վերաբերյալ թիմի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք, որը կցվում է նիստի արձանագրությանը:

IV. ԹԻՄԻ ՂԵԿԱՎԱՐԸ

10.Թիմի ղեկավարը՝

1) ընտրվում է թիմի անդամների կողմից՝ մեկ տարի ժամկետով,

2) հրավիրում և վարում է թիմի նիստերը, իր բացակայության դեպքում թիմի ղեկավարի լիազորությունները, թիմի անդամների որոշմամբ, իրականացնում է թիմի այլ անդամ,

3) ապահովում է թիմի բնականոն գործունեությունը

4) պատրաստում է նիստերի օրակարգորի նախագծերը:

V. ԹԻՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

11. Թիմի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. նիստի ժամանակ քննարկվող խնդիրների վերաբերյալ բարձրացնելու հարցեր,

բ. ներկայացնելու թիմի գործունեության,ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առաջարկություններ,

գ. ծանոթանալու նիստերի արձանագրություններին,

2) պարտավոր են մասնակցել թիմի աշխատանքներին:

VI. ԹԻՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

12.Թիմի քարտուղարը՝

1) ապահովում է թիմի քննարկմանը ներկայացվող հարցերի նախապատրաստումը,

2) ապահովում է նիստի արձանագրության կազմումը,

3) ապահովում է թիմի գործունեության մասին տեղեկատվության տարածումը:

VII. ԹԻՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

13. Թիմի գործունեությունը դադարում է համայնքի ղեկավաի որոշմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Տ. ՄԽԻԹԱՐՅԱՆ**

Հավելված N 2
Թումանյան համայնքի ղեկավարի
2021թ. հոկտեմբերի 1-ի թիվ 92-Ա որոշում

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹԻՄԻ ԿԱԶՄԸ

1. Վարդանյան Սուսաննա – գ. Մարց 077-93-88-13
2. Ռամազյան Անահիտ – ք. Թումանյան 094-55-40-60
3. Մկրտումյան Նորիկ – գ. Քարինջ 094-17-07-57
4. Ղազարյան Արեն – գ. Մարց 093-77-91-40
5. Եղինյան Արամ -- գ. Քարինջ 077-73-42-32
6. Մոսինյան Արման -- ք. Թումանյան 093-70-06-41
7. Մելքումյան Վահե -- ք. Թումանյան 095-44-40-94
8. Մխիթարյան Տիգրան -- գ. Քարինջ 094-19-88-12
9. Շաքարյան Երվանդ -- ք. Թումանյան 094-96-77-22
10. Արզումանյան Աշխեն-- ք. Թումանյան 093-44-70-61
11. Քառյան Կարեն -- գ. Աթան 094-28-58-95
12. Սարգսյան Սարիբեկ -- գ. Լորուտ 093-58-59-74
13. Քարիմյան Տիրուհի -- ք. Թումանյան 094-94-93-40
14. Վանյան Բաղիշ -- գ. Շամուտ 094-94-92-45
15. Քառյան Հայկ -- գ. Ահնիձոր 077-94-93-55
16. Վարդանյան Էդգար -- ք. Թումանյան 093-80-78-18
17. Հակոբյան Արարատ -- գ. Շամուտ 094-72-83-47
18. Դավթյան Սիրուշ -- ք. Թումանյան 094-66-13-40
19. Մարուքյան Արամ -- գ. Աթան 094-19-44-89
20. Աբովյան Գևորգ -- գ. Ահնիձոր 077-81-68-17

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Տ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 93-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 06-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2020թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 49-Ն որոշումը և Թումանյան համայնքի ԱՁ -ների հայտերը՝
որոշում եմ.

1.Թույլատրել Թումանյան համայնքի ներքոգրյալ ԱՁ-ներին իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք.
1/Հախվերդյան Հովակիմ-ք.Թումանյան 2021թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
2/ Գրիգորյան Սուսան -ք. Թումանյան 2021թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
3/ Սարգսյան Գայանե - ք. Թումանյան 2021թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
4/ Սարգսյան Հայկուշ -ք. Թումանյան 2021թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
5/ Չերչինյան Սեդրակ -ք.Թումանյան 2021թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
6/ Մաթևոսյան Սուսաննա-գ.Ահնիձոր 2021թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
7/ Սարգսյան Մարինե - գ.Մարց 2021թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
8/ Ղազարյան Հրանուշ -գ. Մարց 2021թ. 2021թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 1
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 94-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 06-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2020թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 49-Ն որոշումը և Թումանյան համայնքի ԱՁ -ների հայտերը՝
որոշում եմ.

1.Թույլատրել Թումանյան համայնքի ներքոգրյալ ԱՁ-ներին իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք.
1/Վանյան Լաուրա -գ.Քարինջ 2021թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
2/Քոչարյան Նաիրա -գ.Քարինջ 2021թ.հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:
3/ Սահակյան Անահիտ - գ.Լորուտ 2021թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
4/ Զուրաբյան Լուսինե- գ.Լորուտ 2021թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 5
ք.Թումանյան